



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 18 » Դեկտեմբեր 2024թ.
ք. Արմավիր

N ՄՈ/148 -Ա

«ՊՏՂՈՒՆՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի մարտի 15-ի N ՄՈ/146-Ա և N ՄՈ/147-Ա որոշումները, «Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

- Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
- Հանձնաժողովին (Ն. Ալավերդյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Շուշաննա Արթենյանին (համաձայնությամբ):
- Հանձնաժողովին (Ն. Ալավերդյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ Ա. Համբարձումյան)՝ աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:



ՄԱՐԶՊԵՏ՝

eID

Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2024 թվականի Մայիսի 18 ի
N ՄՈ/148 -Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Ալավերդյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության
ավագ մասնագետ

Անդամներ՝

Ա. Խլղաթյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի վարչության
ավագ մասնագետ

Զ. Եղոյան -

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Հանձնող՝

Արմինե Գրիգորյան -

«Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ
դպրոց» պետական ոչ առևտրային
կազմակերպության նախկին տնօրեն

Ընդունող՝

Սիլվա Գրիգորյան -

«Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ
դպրոց» պետական ոչ առևտրային
կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ